Ծավալաթերթ

«ՀԱԷԿ» ՓԲԸ տարածքի դեռատիզացիոն, դեզինսեկցիոն, դեզինֆեկցիոն ծառայությունների մատուցման

Դեռատիզացիա
Ծառայության նկարագիրը - Պայքար կրծողների դեմ, համաձայն ՀՀ Առողջապահության նախարարության 16.07.2010թ. թիվ 13-Ն հրամանի «Ախտահանման, կրծողասպան և հոդվածոտանիների ոչնչացման աշխատանքների իրականացման և աշխատողների առողջության պահպանման» ՍՆ N 2.2.5-003-05 սանիտարական կանոններ և հիգենիկ նորմատիվներ հաստատելու մասին: Պայքարը կազմակերպել մեխանիկական/թակարդներ, սոսնձե բռնիչներ/ և քիմիական ՀՀ-ում թույլատրված թունաքիմիկատներով՝ բրոմոդիալոն, բրոդիֆակում և համարժեք այլ նյութերով, որոնք արգելված չեն ՄԱԿ-ի կողմից և թույլատրված են ՀՀ առողջապահության նախարարության կողմից: Ծառայությունը մատուցվում է ամիսը 4 անգամ: Յուրաքանչյուր այցի ժամանակ աշխատակիցը պետք է հետազոտի օբյեկտի շրջապատը և ներսը, ստուգի տեղադրված գրավչանյութերի առկայությունը: Հետազոտության ընթացքում հայտնաբերված բնանցքերում տեղադրի թարմ գրավչանյութ:
Ընդամենը 70 426.0 մ^2

Դեզինսեկցիա /միջատազերծում/
Ծառայություն՝ համաձայն ՀՀ Առողջապահության նախարարության 16.07.2010թ. թիվ 13-Ն հրամանով հաստատված «Միջատների դեմ պայքարի սանիտարական կանոններ և նորմեր»-ի:
Ծառայությունը մատուցել մեխանիկական մեթոդով՝ կպչուն միջատաբռնիչներ, թունաքիմիկատներով՝ ցիպերմետրին և համարժեք այլ ինսեկտիցիդներով, որոնք արգելված չեն ՄԱԿ-ի կողմից և թույլատրված են ՀՀ առողջապահության նախարարության կողմից:
Ծառայությունները մատուցել սպասարկող կազմակերպության աշխատուժով և միջոցներով: Ծառայությունը մատուցել ամիսը 2 անգամ հաճախականությամբ: Յուրաքանչյուր այցի ժամանակ հետազոտել օբյեկտում միջատների առկայությունը և հայտնաբերելու դեպքում կատարել դեզինսեկցիա /միջատազերծում/ թույլատրված թունաքիմիկատներով, հեղացրման մեթոդով:
Ընդամենը 1 282 մ^2

Դեզինֆեկցիա
Ծառայություն՝ համաձայն ՀՀ Առողջապահության նախարարության 16.07.2010թ. թիվ 13-Ն հրամանի:
Ծառայությունը մատուցել ՀՀ Առողջապահության նախարարության կողմից թույլատրված ախտահանիչներով՝ քլորամին, քլորակիր, պրեսեպտ, սուրֆանիոս: Ծառայությունները մատուցել սպասարկող կազմակերպության բանվորական ուժերով և միջոցներով, ամսական 3 անգամ հաճախականությամբ: Յուրաքանչյուր այցի ժամանակ կատարել վարակիչ հիվանդությունների կանխարգելման միջոցառումներ՝ ախտահանել զուգարանները և արտադրամասերը, թույլատրված ախտահանիչներով, հեղացրման մեթոդով:
Ընդամենը 1 282 մ^2

Վերոգրյալ ծառայությունները պետք է մատուցվեն միայն սպասարկող կազմակերպության աշխատակիցների ուժերով և տեխնիկական միջոցներով: Սպասարկող կազմակերպությունը պետք է ապահովված լինի թունաքիմիկատների պահպանման պահեստներով և գրավչանյութերի պատրաստման ու փորձարկման լաբորատորիայով:
Ծառայությունների մի մասը պետք է կատարել Տուրբինային արտադրամասում, ինչպես նաև հարկ եղած ժամանակ Ռեակտորային արտադրամասի հսկման գոտում (контролируемая зона)՝ առավել վտանգավոր պայմաններում: Ուստի ծառայություն մատուցողները պետք է տիրապետեն և պահպանեն ՀԱԷԿ-ում գործող տեխնիկական անվտանգության կանոնները՝ չխոչընդոտելով Կայանի աշխատանքի բնականոն ընթացքին:

N	«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի շենք, շինությունների, արտադրամասերի ծավալները /մշակման տարածքները/	Դեռատիզացիա	Դեզինսեկցիա	Դեզինֆեկցիա
1	Վարչական մասնաշենք ճաշարանի հետ միասին (վարչական մասնաշենքի 1-4 հարկեր, նկուղային հարկ, ճաշարանի 1-ին և 2-րդ հարկեր, ԴՏՂՄԾի շենք և ԱԻևՔՊ ծառայություն, ապաստարան №4, ապաստարան №2)	12 000 մ^2	268 մ^2	268 մ^2
2	Շինվերանորոգման արտադրամաս և ատաղձագործական արհեստանոց	2 126 մ^2	80 մ^2	80 մ^2
3	Սանիտարա-կենցաղային լաբորատոր մասնաշենք (ՄԱՀ բաժին, սանկենցաղային լաբորատորիա՝ 1-4 հարկեր, նկուղային հարկ, էլեկտրական արտադրամաս, ՋԱՉ արտադրամաս)	7 884 մ^2	290 մ^2	290 մ^2
4	Կենտրոնական վերանորոգման արտադրամաս	4 356 մ^2	125 մ^2	125 մ^2
5	Տուրբինային արտադրամաս	24 422 մ^2	85 մ^2	85 մ^2
6	Կենտրոնական պահեստ	4 820 մ^2	10 մ^2	10 մ^2
7	Շինվարչության շենք (Շինարարության բաժին)	2 025 մ^2	59 մ^2	59 մ^2
8	Ավտոտրանսպորտային տնտեսություն	2 390 մ^2	20 մ^2	20 մ^2
9	Ռազմականացված պահպանության ջոկատի շենք և 7 հենակետեր	500 մ^2	100 մ^2	100 մ^2
10	Քիմիական արտադրամաս	3 154 մ^2	60 մ^2	60 մ^2
11	ՋՍՀ արտադրամաս	1 358 մ^2	40 մ^2	40 մ^2
12	ՀԱԷԿ-ի ՀՀՋ	1 491 մ^2	50 մ^2	50 մ^2
13	1043 Զորամաս	324 մ^2	20 մ^2	20 մ^2
14	Ուսումնավարժական կետ	1 862 մ^2	35 մ^2	35 մ^2
15	Արտաքին դոզոմետրային լաբորատորիա	964 մ^2	40 մ^2	40 մ^2
16	Օդերևութաբանական կայան	36 մ^2		
17	«Սև ջուր» շենք	714 մ^2		
	ԸՆԴԱՄԵՆԸ	**70 426 մ^2**	**1 282 մ^2**	**1 282 մ^2**

ՎՏԲ պետ Ս.Ավետիսյան

Ծավալաթերթ

«ՀԱԷԿ» ՓԲԸ տարածքում սողունների դեմ պայքարի ծառայությունների մատուցման

Ծառայության նկարագիրը -Ծառայությունը պետք է մատուցվի ՀԱԷԿ-ի ավտոկայանատեղիներում՝ բարձրորակ նյութերի կիրառմամբ, առանց վնասելու շրջակա միջավայրը: Ծառայությունը պետք է մատուցվի եղանակային բարձր ջերմաստիճանի դեպքում՝ սողունների սեզոնային ակտիվության ժամանակ, ամիսը 2 անգամ հաճախականությամբ, սպասարկող կազմակերպության աշխատակիցների ուժերով և տեխնիկական միջոցներով:

N	«ՀԱԷԿ»ՓԲԸ-ի ավտոկայանատեղի	Պարագիծը (մետր)
1	Թիվ 1	300,6
2	Թիվ 2	290
3	Թիվ 3	200
4	Թիվ 4	90
5	Թիվ 5	160
6	Թիվ 6	270
7	Թիվ 7	110
	Ընդամենը	**1420,6**

ՎՏԲ պետ Ս.Ավետիսյան